

Լ. ԿԱՍՈՒԼ



ՀԵՐԻԱՔ ԱԼՅՈՇԿԱ-ՌՅԱԶԱՆԻ  
ՔԵՐԻ ԲԵԼՈՄՈՐԻ ՄԱՍԻՆ


ՊԵՏՐՈՎ

31 JAN 2018

Լ. ԿԱՍՈՒԼ

ՀԵՔԻԱԹ  
ԱԼՅՈՇԿԱ-ՌՅԱԶՄԱՆԻ  
ՅԵՎ  
ՔԵՐԻ ԲԵԼՈՄՈՐԻ ՄԱՍԻՆ

Նկարները Տ. ԶՎՈՆԱՐԵՎԱ.ՅԻ  
Թարգմ. Ա. ՀԱՅՐՅԱՆ



1936  
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տեխ. խմբագիր՝ Գ. Զենյան  
Սրբագրիչներ՝ Հ. Մամուկյան, Հ. Դոլուխանյան

Հրատարակ. 3719  
Գլավլիստի լիտպու Կ. 1063  
Պատվեր 604  
Տեքստ 5000  
Գեղարվատի տպարան  
Երևան, Առ Գնունի, 4



11-28565 զ/վ

1

Կար յերկու ծով ու նրանց միջև մի յերկար լեռ:  
Սպրում եյին յերկու հարեաններ ու նրանց միջև յերկար վեճ եր գնում:

Ծովերից մեկը կոչվում եր Սպիտակ, մյուսը՝ Բալթիկ:  
Հարեաններից մեկը մի բարեսիրտ նկարչուհի յեր, իսկ մյուսը՝ կոմունիստ զինվորական — մի խիստ մարդ:

Նրանք վիճում եյին գույների մասին: Նկարչուհին սիրում եր միայն շոյող և նուրբ գույներ: Նա սիրում եր վարդագույնն ու յերկնագույնը: Նա սիրում եր արծաթագույնն ու վոսկեգույնը, իսկ ուրիշ գույներ նա տեսնել անգամ չեր ուզում:

— Ախ, հեռացրեք այդ կոպիտ գորշ գույնը, — բացականչում եր նա և աչքերը փակում, վոր չտեսնի:

Իսկ կոմունիստ զինվորականը տեսել եր և գիտեր այն բոլոր ներկերը, վորոնք գոյություն ունեն կյանքում: Նա սիրում եր կապույտ յերկինքն ու կանաչ խոտը, սիրում եր պիոներների կարմիր վզկապն ու նրանց վարդագույն թշերը: Բայց նա սիրում եր նաև իր գրատի գորշ գույնն ու հոտը այն սև ներկի, վորով գրքի տառեր են տպում:

Ամբողջ որը նկարչուհին իր սենյակում գեղեցիկ նկարներ եր նկարում: Նա նկարում եր կապույտ յերկինքն ու վարդագույն արշալույսը, վոսկեգույն դաշտերն ու արծաթագույն լուսինը: Այդ ժամանակ նա այնպես եր հուզ-

վում, վոր արցունքները թափփում եյին: Արցունքները թափփում ու կաթում եյին ուղղակի ներկի մեջ: Յեզ լստացփում եյին ջրալի, ավելի քան ջրալի ներկեր: Յեզ ընդհանրապես նա շատ լալկանն եր. բայցնա վոչ մի պայմանով չեր ընդունում իր լալկան լինելը: «Ախ, ինչ եք ասում, յերբեք ել այդպես չի, — ասում եր նա, — յես ամենեին ել լալկան չեմ: Յես բարեսիրտ եմ, և լաց եմ լինում միայն յերեք դեպքում. առաջինը — տրտմությունից, յերկրորդը — ուրախությունից, և յերրորդը — յերը վոչ տրտմություն կա, և վոչ ել ուրախություն: Այդ ժամանակ յես լաց եմ լինում, վորովհետեւ ինձ համար տիսուր ե լինում: Ահա և բոլորը: Իսկ կոմունիստ գինվորականն իր կյանքում, ճիշտ ե, լաց ե յեղել միայն յերեք անգամ: Առաջին անգամ նա լաց յեղավ յերեխա ժամանակը, յերբ իր կողկակար վարպետն իրեն փողոց շպրտեց: Յերկրորդ անգամ — յերբ քաղաքացիական պատերազմի ժամանակ հիվանդացել եր տիֆով. նա ուզում եր վոտքի կանգնել, վոր կովելու գնա, բայց նրա վոտները ծալվում եյին... Յեզ յերրորդ անգամ կոմունիստ գինվորականը, այդ խիստ մարդը, լաց յեղավ, յերբ մեռավ լենինը: Ահա և բոլորը: Իսկ տիսրելու համար նա ժամանակ չուներ: Գիշեր ու ցերեկ նա զբաղված եր բարձր, կանաչ տանը: Այդ տունը կանգնած ե Մոսկվայի մեջտեղը, Լուբյանակ բլրի վրա: Այստեղից, ինչպես հրշեց դիտանոցից, յերեսում ե ամբողջ խորհրդային յերկիրը: Այստեղից հետեւում են, թե արդյոք վատ մարդիկ չեն պատրաստվում վնասելու, թե արդյոք թշնամիները չեն մտադրվում հարձակվելու մեր սահմանների վրա: Այդ տունը կոչվում ե ՊՔՎ: Այստեղ մարդիկ հսկում են գիշեր ու ցերեկ: Նրանք զգաստ են գիշեր ու ցերեկ: Նրանք կոչվում են չեկիստներ:

— Յես բարեսիրտ եմ, իսկ դուք խիստ մարդ եք, — ասում եր նկարչուհին կոմունիստին: — Դուք չեկիստ եք, դուք՝ ՊՔՎ եք:

Յեզ նրանք միշտ վիճում եյին: Նկարչուհուն ծանոթ եր միայն քաղցրը, իսկ չեկիստ կոմունիստը փորձել եր նաև

դառը: Նկարչուհին միայն ու միայն եր նկարում, իսկ չեկիստը նկատում եր նաև ստվերները: Բայց նրանց վեճի գլխավոր շարժառիթը յեղավ Ալյոշան, — Ոյազան մականունով:

2

Ալյոշան Ոյազանից յեկած անապաստան տղա յեր: Նրա հորն ու մորը սպիտակներն սպանել եյին քաղաքացիական կովում: Իսկ Ալյոշան մանկատնից փախավ, վորովհետեւ վիրապորվել եր կիսելի համար: Ալյոշան շատ եր սիրում կաթով կիսելը: Նա կիսելն ուտում եր դանդաղ և խաղալով: Նա ուտում եր կիսելը պնակի յերկու կողքերից, և կաթը թափում առաջացած փոսիկների մեջ: Մեջտեղում մնում եր կիսելի միջնապատը, վորն Ալյոշան ուտում եր ամենից վերջը: Բոլոր յերեխաներն արդեն վաղուց ընթրել, բերանները մաքրել և գնացել եյին քնելու, մինչդեռ նա մենամենակ խաղում եր կիսելի հետ: Կառավարչուհին նրան շտապեցնում և վերցնում եր գդալը, վոր կիսելն ու կաթն իրար խառնի, բայց Ալյոշան բղավում եր.

— Մի քանդիր, մի քանդիր ասում եմ: Դա իմ ամբարտակն ե:

Յեզ կովում եր: Մի անգամ նա այնպես ուշ նստեց կիսելն ուտելու, և այնպես բարձր «մի քանդիր» բղավեց, վոր արթնացրեց բոլոր յերեխաներին: Յերեխաները վախեցան: Կառավարչուհին Ալյոշայից խլեց պնակը: Այն ժամանակ Ալյոշան նրա ջգրու փախավ մանկատնից: Նա անապաստան դարձավ: Երան կանչում եյին Ալյոշկա-Ոյազան:

Մի հանգստի որ կոմունիստ-չեկիստը և նկարչուհին զբունում: Եյին Մոսկվայում: Նրանք զբունում եյին և վիճում: Նրանք վիճում եյին յեղանակի մասին: Նկարչուհին միայն խաղաղ յեղանակն եր սիրում, իսկ չեկիստը սիրում եր քամին, և մրսելուց չեր վախենում: Այդտեղ նրանք տեսան վնթի անապաստանին:



բայց լվացվել չեր ցանկանում... Լվացարանի ջուրը նա թափում եր հատակին: Նա մատներով ջրափոսեր եր շինում: Ջրափոսերի միջև նա կամուրջներ եր կառուցում: Յեկ յերը մի գեղեցիկ առավոտ նկարչունին վերադարձ կոռպերատիվ, տանը նա վոչ Ալյոշային գտավ, վոչ կապույտ ներկը, և վոչ ել վարդագույնը: Ալյոշան գողացել եր ներկերը: Ալյոշան վախել եր:

— Ա, իւ—



աշխույժ, յերիտասարդ ու յերջանիկ քաղաքացիներ լինեն: Ահա թե ինչպես ե ասել լենինը: Իսկ յերջանիկ կարելի յե լինել միայն աշխատելով: Բայց նկարչունին վոչ մի պայմանով չեր զինում Ալյոշային: Նա ասում

եր, վորինքը վորբին կղաստիարակի:

Ալյոշան տեղափոխվեց նկարչունու մոտ: Նա կիսել եր ուտում,

նեցեք նրան, տարեք նրան: Ինչ անշնորհակալ տղայ յե ծես այժմ նկարել չեմ կարող: Նա գողացել ե իմ կապույտ և վարդագույն ներկերը: Յեկ այժմ իմ բողոք նկարները սև են դուրս գալիս: — Յեկ նա այնպես եր լաց լինում հեռախոսի վողի մեջ, վոր խոնավությունը հեռախոսի թերով գնաց ու շուտով չեկիստի սեղանի վրա, վորտեղ դրված եր հեռախոսը, լճակ գոյացավ:

3



Անցավ մի քանի տարի: Ալյոշայի մասին ձեն-ձուն չկար: Մի անգամ ուշ գիշերով չեկիստն ավտոյով տուն եր գնում: Անկյունում նա տեսավ հուզված ամբոխին: Գող եյին բունել: Գողին ուզում եյին ծեծել: Ահա, ինչ վոր մեկը ձեռքը բարձրացրեց... Չեկիստը մեքենայից դուրս թռավ և բըռնեց բարձրացրած ձեռքը:

— Զհամարձակվեք ծեծել:

— Ենե, խիստ մարդ ե, թույլ չի տալիս գողին խրատենք:

— Մենք այդպես չենք խրատում, — խստորեն ասաց չեկիստը: — Գնանք, քաղաքացի, հետնիր ինձ:

Յեկ նա գողին տարավ իր հետեւից: Ամբոխն աղմկում եր, իսկ գողը դողում եր:

— Թողեք ինձ, — ասաց գողը, — յես ջահել աղա յեմ: Յես ել չեմ անի:

Չեկիստը նայեց նրան, և նրանք ճանաչեցին միմյանց:

— Ահա և հայրենակցի հանդիպեցի, — ասաց չեկիստը: — Ես, Ալեքսեյ, բարեկամս. ահա թե դու ինչ ես դարձել: Քո գործերը վատ են:

— Ես, թող այդպես լինի, — ասաց Ալյոշան:

— Ինչու դու այն ժամանակ վախար: Կզայիր ինձ մոտ, յես քեզ կուղարկեյի կոմունայում աշխատելու: Տես վորտեղ են քո ընկերները: Կար գող Սերեգա, իսկ հիմա դար-

ձել ե ինժեներ Սերգեյ։ Կար Պավլիկ ժուլիկ, իսկ հիմա  
նա դարձել ե ողաչու Պավել։ Կար մուրացկան - Նիկոլայ,  
իսկ հիմա նա դարձել ե դերասան Նիկոլայ։ Կար կովա-  
րար - Վասյուկ, վորը հիմա դարձել ե բժիշկ Վասիլի Իվա-  
նովիչ։ Իսկ դու Ալյոշկա - Ռյազան եյիր, այժմ դարձել ես  
գող Ալեքսեյ։

— Ե, հետո ինչ, — ասաց Ալյոշան, — յես բուրժուանե-  
րից եմ գողացել։

— Մեզ մոտ բուրժուաներ չկան։ Դու հենց մերոնց ես  
կողոպտել։ Դու քո յերկրից ես գողացել։ Հիշելն անգամ  
զզվելի յե։

Այսպես ասաց չեկիստը։ Ալյոշան վոչինչ չպատասխա-  
նեց։ Չեկիստը նրան բերեց ՊԲՎ-ի շենքը։ Չեկիստը  
նրան բերեց իր առանձնասենյակը։ Չեկիստի առանձնա-  
սենյակում կախված եր մի մեծ քարտեզ։ Քարտեզի վրա  
կար յերկու ծով, իսկ ծովերի միջև սար - թերակղզի։

— Ահա, Ալեքսեյ, — ասաց չեկիստը։ — դու կզնաս Մեդ-  
վեժի սարը՝ ծովերի առաջը փակելու։ Դա արդեն կիսել չե,  
դա լուրջ գործ ե։ Իսկական ամ բարտակներ պիտի կատու-  
ցես, իսկական ջրանցքներ պիտի փորես, վոր մեր նավերն  
ուղիղ ճանապարհով լողան մի ծովից մ'յուսը, թե չե  
նրանց համար հիմա հեռու յե շուրջանակի գնալը։

— Եհ, հետո ինչ, — քրթմնջաց Ալյոշան, — միևնույն  
ե կիախչեմ։

— Չես փախչի, յես քեզնից մարդ կպատրաստեմ։

— Իսկ մի՞թե յես հիմա մարդ չեմ։

— Դեռ վոչ, — ասաց չեկիստը և Ալյոշային տարավ  
քարտեզի մոտ։

— Ահա, տես Սկանդինավիան։ Սա վոչ թե կղզի յե, այլ  
թերակղզի։ Ցեվ դու ել վոչ թե մարդ ես, այլ կես մարդ։

Ցեվ Ալյոշա-Ռյազանին ուղարկեցին Մեդվեժի սարը։

Ալյոշային ուղարկեցին ծովերը միացնելու։ Գնացքը  
Ալյոշային տարավ դեպի հեռավոր հյուսիս, դեպի ցուրտ  
լճերը, կարծր ժայռերը, վայրի անտառները։

Փիշերը գնացքում Ալյոշան սոսկալի յերազ տեսավ։ Նա  
յերազում տեսավ, վոր իր դեմք դուրս յեկան վախեցած



թռչուններն ու գազանները։ Արջերը սնգսնգալով եյին գնում,  
գայլերը վազում, աղվեսները փախչում եյին, նապաստակ-  
ները վոստոստում։ Թռչում եյին բուերն ու ագռավները։  
Քամի յեր առաջանում նրանց ծանր թևերից։ «Ով կարող  
ե, թող ազատվի», գոռում եյին գազանները։ «Ազատվիր,  
Ալյոշա», — ծվծվում եյին թռչունները։ — Մեդվեժի սարի  
մոտ սարսափելի վորոտ ե լսվում։ Յերկնքից բարեր են  
թափվում։ Գետերը լեռնանում են։ Ժայռերն որոր-  
վում են կաթնատամների պես։ Անտառները ճեղքվում  
են։ Հողը մինչև յերկինք ե թռչում։ Ալյոշան վախեցավ,  
և քիչ ելու մնում վոր արթնանար, բայց այնտեղ նա ու-  
րախ ձայն լսեց։

— Մի վախենա, Ալյոշա, Վախկոտներին մի լոի։ Հա-  
մարձակ առաջ գնա, ծովերը միացըրու։ Ընտրիր քեզ հա-  
մար ազնիվ ուղի, մեզ համար ել ուղիղ ճանապարհ բաց  
արա ծովեց մինչև ծով։


Դա ձկներն ասացին, համբ ձկները։ Ձկները ծեծում  
եյին ափերը։ Ձկների արծաթազույն խումբը լողում եր  
գազանների դիմաց։

Ալյոշային տարան Մեղվեժի սարը։ Այնտեղ ձամբար կար, իսկ ճամբարում ապրում եյին նախկին գողերն ու նախկին ավազակները, առաջվա վնասարարներն ու հին բուրժուաները, յերեկվա խուլիզաններն ու խորհրդային յերկրի մյուս թշնամիները։ Շուրջն անտառն եր ձգվում։ Յերկինքն ամպել եր։ Քարերը կիտվել եյին։ Ցուրտ եր, պահակներ չկային, բայց ամեն տեղ յեռում եր աշխատանքը։ Աշխատանքը վորոտում եր հորիզոնից - հորիզոն, ծովից - ծով։ Մարդիկ կացիններով հեղեղել եյին անտառը, և անտառը նրանց ճանապարհ եր տալիս։ Մարդիկ պայթեցնում եյին գրանիտյա ժայռերը, և հողն ախքաշելով թռչում եր յերկինք։ Մարդիկ ջրանցքներ եյին վորում քարե սարի միջով, վորպեսզի ծովերը միացնեն։ Նրանք կառուցում եյին ամբարտակներ, վորպեսզի ջուրը հեղեղի ափերը։

«Չեմ ուզում աշխատել։ Կփախչեմ, — մտածեց Ալյոշան և շուրջը նայեց։ — Այ թե խորամանկ ժամապահներ են, հա, ծածկել են և չեն յերեռում։ Իսկ յեթե փախչես, իսկույն թփերից կսկսեն կրակել»։

Յեզ վորպեսզի ստուգի այդ, Ալյոշան վազեց դեպի անտառ։ Նա վազում եր և շուրջը նայու։ Բայց վոչ վոք չփորձեց նրա առաջը կտրելու։ Նրա վրա ուշադրություն դարձնող ել չեղափ։ Բոլորն զրադկած եյին իրենց դժվար աշխատանքով։ Բոլորն աշխատում եյին։ Ալյոշան նույնիսկ վիրավորված զգաց, վոր իրեն վոչ վոք չի հսկում, վոր ինքը վոչ վորի հարկավոր չե։ Նա տխուր ու տրտում հասավ ճամբար։ Նրա դիմաց հայտնվեց Քեռի Բելոմորի բրիգադը։ Քեռին ինքն անցյալում յեղել եր հոչակավոր ավագակ։ Նա կողոպտում եր նավերը և կանգնեցնում գնացքներն ընթացքի ժամանակ։ Իսկ այժմ նա դարձել եր հարվածային - դաստիարակիչ։

— Եյ, ոյազանցի, դու ինչու չես աշխատում, — հարցրեց Ալյոշային բեխավոր քեռի Բելոմորը։ — Մեզ մոտ ով չի աշխատում, նա թրջված հավի շքանշան ե ստանում։



— Եհ, թող այլպես լինի, — յես չեմ աշխատի, — ասաց  
Ալյոշան: — Իսկ ինչու ինձ վրա վոչ վոք չի հսկում. չե՞ վոր  
յես կարող եմ փախչել:

— Չես փախչի, քեզ խոսքը կպահի:

— Ոյդ ի՞նչ խոսք ե:

— Լենինյան խոսքը:

— Յես լենինին վոչ մի խոսք չեմ տվել:

— Սակայն լենինը մեզ բոլորիս խոսք ե տվել, վոր  
մենք յերջանիկ քաղաքացիներ կլինենք: Մի՞թե դու չես  
հավատում լենինին: Մի՞թե դու չես ուզում յերջանիկ լի-  
նել:

Քեռի Բելոմորը պատմեց, վոր իր բրիգադում յերե-  
սունյերկու տղաներ են, յերեսունյերկու ջրանցք կառու-  
ցողներ, յերեսունյերկու նախկին գողեր և անապաստան-  
ներ: Առաջ նրանք ել ուզում եյին փախչել: Բայց ահա  
նրանք կառուցում են ամենալավ ամբարտակը և բոլորը  
նրանց հարգում, են:

— Գնանք մեզ մոտ, կլինես յերեսունյերեքերորդը, —  
ասաց քեռի Բելոմորը. — յերեսունյերեքերորդ հարգա-  
ծայինը, ամենից կարճլիկը:


Ալյոշան ուզում եր ասել «չեմ գա», բայց քեռի Բելո-  
մորի տղերքն այնպիսի հպարտությամբ նայեցին Ալյոշ-  
յին, վոր նա վորոշեց ապացուցել նրանց, թե ինքը՝ Ալյո-  
շան ինչպիսի աշխատող ե:

— Եհ, հետո ինչ, — ասաց նա, — յես ել կզամ, բանն ին-  
չումն ե:

Իսկ ինքը մտածեց. «Յես նրանց միայն կապացուցեմ,  
վորպեսզի նրանք չմեծամտանան, իսկ հետո միհնույն ե,  
կփախչեմ»:

Յեվ բրիգադը գնաց դեպի ամբարտակը: Նրանք յերգ  
եյին յերգում յերեսունյերեք ձայնով:

Ահա գնացին ծովս ամբարտակելու  
Հսկաներն այն՝ յերեսունյերեք.  
Կարիճներ են՝ տղերքը բոլոր,  
Բրիգադիրներն են յերիտասարդ:  
Յեվ տանօւմ ե նրանց գողը նախկին —  
Պանծալի Բելոմոր քեռին:



«Հիմ՞ա յես. նրանց կապացուցեմ, թե յես ինչպիսի աշխատող եմ», — ինքն իրեն ասաց Ալյոշան, և մի ակնթարթում մի գերան տաշեց: Բայց հարվածայիններից յուրաքանչյուրը նույնքան ժամանակում կարողանում եր յերեք գերան տաշել:

— Ա՛խ, այդպես, — ասաց Ալյոշան,  
— Լավ... — Յեվ նա տաշեց յերեք գերան: Բայց այդ ժամանակ հարվածայիններից յուրաքանչյուրը տաշեց իննը գերան:



Ալյոշան աշխատում եր հետ շմալ քեռի բերմորի տղերքից: Նա ուզում է նրանց ապացուցել, թե ինքը՝ Ալյոշան ինչպիսի աշխատող է, յեթե միայն ցանկանա:

Տասերորդ որը նա ընկերներից առաջ անցավ և բոլորը նրան գովեցին:

— Այ, այդպես, ուազանցի, — ասաց քեռի բերմորը և այդ մասին գրեց չեկիստ — պետին:

«Դե, արդեն ապացուցեցի, այժմ կարելի ե փախչել»: — վճռեց Ալյոշան, սակայն, չզիտես թե ինչու, մտադրությունը փոխեց: Շատ հետաքրքիր եր տեսնել, թե ինչպիսի ամբարտակ գուրս կզա նրա գերաններից:

Ամբարտակն աճում եր արագ, և Ալյոշային թվում եր, թե ինքն ել ե աճում նրա հետ միասին: Աշխատելը դըժվար եր, բայց և այնպես այդ աշխատանքն անհամեմատ հետաքրքիր եր, քան կիսելի ամբարտակն ու կաթնապուրի լճակը:




11-20856691

5

Ճամբարում ապրում եր մի վատ մարդ՝ քաղաքացի Կոնտրիկ անունով: «Չեմ ցանկանում յերջանիկ քաղաքացի լինել, իսկ դուք ուժով ինձ այդպիսին չեք դարձնի» — այսպիս եր մտածում Կոնտրիկը, և ամբողջ որերով թափալվում մահճակալի վրա: Նա տխուր յերգ եր յերգում հին կյանքի մասին, և նրա խոպոտ ձայնը տարածվում եր ամբողջ ճամբարում: Նա կոպիտ եր վարփում դաստիարակների հետ, և կովում ընկերների հետ: Նա հրաժարվում եր աշխատելուց: Նա «հրաժարվող» եր:

Նրան թրջված հավերի կավալեր գրեցին:

Կոնտրիկն ուզում եր ճամբարից փախչել: Նա փորձում եր Ալյոշային ել համոզել: Նա կանչում եր նրան դեպի տաք յերկըները: Բայց Ալյոշան այդ մասին լսել անգամ չեր ուզում: Յեվ ահա թե Կոնտրիկն ինչ արագ այդ ժամանակ: Մի անգամ Ալյոշայի գլուխը ցավեց: Կոնտրիկը



հոտ քաշելու համար Ալյոշային գաղտնի տվեց քաղցր, հարբեցնող դեղափոշի: Ալյոշան չհամբերեց, հոտ քաշեց և հարբածի նման դառափ: Նրա զլուխը պտտվեց և վոտները թուլացան: Ալյոշան այդ որը շատ վատ աշխատեց: Նա չարավ այն, ինչ անհրաժեշտ եր, կոպիտ վարվեց քեռի Բելոմորի հետ, փչացրեց ամբարտակի անկյունը: Նրան խնդրեցին հեռանալ, բայց նա չըհեռացավ:

Նրա պատճառով բրիգադը հետ մնաց մյուսներից: Յեկ Ալյոշայի վզից թրջված հավի շքանշան կախեցին:

Յերբ Ալյոշան սթափվեց և տեսավ այդ ամոթալի շքանշանը, նա ամոթից ու վիրափորանքից լաց յեղափ:

— Այ, տեսնում ես, ասաց այն ժամանակ Կոնտրիկը. — այժմ մենք քեզ հետ ընկերներ ենք: Մի աքլորանա, թրջված հավերի կավալեր: Միթե դու այս բոլորից հետո ել այս տեղ կմնաս:



Յեկ Ալյոշան վճռեց բոլորի ջիգրու փախչել:

Նրանք փախչում եյին գիշերը, իսկ գիշերը սև եր, գիշերը փոթորկալի: Քամին ալիքները տանում եր դեպի չափարտված ամբարտակը: Ալյոշան և Կոնտրիկը հանդարտ, գաղտագողի անցան ճամբարի միջով: Ալյոշայի մեջ ցանկություն առաջացավ մի վերջին անգամ նայել իր ամբարտակին, վորն այնպես լայն եր, այնպես բարձր և այնպես գեղեցիկ: Յեկ հանկարծ նա նկատեց, վոր ալիքները թրջում են, վոր հողմը շարժեց թմբի մի մասը: Զուրը բարձրանում եր: Զուրը խցկում եր, քանդում, հղում, կտրուռում: Զուրն սպառնում եր Ալյոշկայի ամբարտակը վլցնել:

— Քանդում ե, քանդում ե, — գոռաց Ալյոշան: — Կոնտրիկ, յես չեմ կարող, յես վագում եմ մերոնց հայտնելու: Գնա մենակ, ինչպես ուզում ես:

Նա մտավ սառած ջուրը, ձեռներով, կապտած ձեռներով շոշափեց մնասվածքները, դուրս յեկավ և դեպի ճամբար վագեց գոռալով. «Քանդում ե, քանդում ե»:

Յեկ քեռի Բելոմորի տղերքը մի անգամից վեր թուան: Յեկ ինքը՝ քեռի Բելոմորը փոշտաց ու զարթնեց: Նա զարթնելուն պես զլխարկը դրեց: Ճամբարում թմբուկներ եյին զարկում: Վորոտում եր ահազանգը: Ծածանվում եյին դրոշակները: Փայլատակեցին լուսարձակները, հնչեց նվազախումբը:


Զրանցքի մարտիկները շտուրմի գնացին: Նրանք գընում եյին ամբարտակը փրկելու: Քամին փչում եր դեմից: Անձրկը թափվում եր: Զուրը ծեծում եր ափերը. բոլորից առաջ բայլում եր քեռի Բելոմորը և նրա յերեսունյերեք հսկաները:

Հարվածայիններն աշխատեցին ամբողջ գիշերն ու ամբողջ ցերեկը:


Ալյոշան ամբարտակից չհեռացավ ամբողջ գիշերն ու ցերեկը: Սառը ջրում նա մրսեց և հագում եր: Քեռի Բելոմորը պատվիրեց նրան տուն գնալ: Ալյոշան չեր ուզում,



— Արտասահման, — զարմացավ պետք: — Ո՞ւմ:  
— Շվեդական և նորվեգական թագավորին, — ասաց  
Ալյոշան և կարդաց իր կազմած հեռագիրը:  
«Քաղաքացի թագավորներ և յերկիր կառավարողներ,  
— կարդում եր նա: — հայտնում ենք ձեզ, վոր այժմ դուք  
ապրում եք վոչ թե թերակղղում, այլ իսկական կղղում:  
Բելոմորի բրիգադի անդամ նախկին կես մարդ, իսկ  
այժմ իսկական մարդ՝ Ալեքսեյ Ռյազան, կարմիր դրո-  
շակակիր»:



ՎԵՐ





ՀՀ Ազգային գրադարան

NL0937834

4 ИНВ. 1861

4 КУБ 50 ч.

4

11

28565

Л. К А С С И ЛЬ  
СКАЗКА об АЛЕШКЕ РЯЗАНЬ  
и ДЯДЬКЕ БЕЛОМОРЕ  
ГИЗ ССР АРМЕНИИ ЕРЕВАН 1936